ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1-ՀԽ

Շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհրդի նիստ

30.04.2021թ. ք. Երևան

Ժամը 14:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ռ. Պետրոսյան	Շրջակա միջավայրի նախարար, խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. Առաքելյան	Շրջակա միջավայրի նախարարի խորհրդական
Մ. Զաքրյան	«Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոն» ՀԿ, նախագահ
Վ. Բուռնազյան	«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, փոխնախագահ
Ք. Սահակյան	«Էկոլոգիան հանուն խաղաղ գոյակցման» ՀԿ. նախագահ
Մ. Տաշչյան	EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք, խմբագիր
Վ. Սալահյան	«ԷկոԱղբ» բնապահպանական ՀԿ, ծրագրերի ղեկավար
Տ. Ազիզբեկյան	«ԱրմԴայվինգ» Սուզորդների Ակումբ ՀԿ, նախագահ

Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ, նախագահ
Ա. Հովհաննիսյան	Տուրիզմի զարգացման փորձագետ
Ս. Թամոյան	ՀԱԱՀ Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն, գյուղ. գիտությունների թեկնածու, դոցենտ էկոլոգ
Ա. Ծատուրյան	«Ամերիաբանկ» ՓԲԸ, Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատման մասնագետ
Ա. Հովսեփյան	«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիաան ՀԿ, նախագահ
Գ. Ներսիսյան	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, քաղաքային էկոլոգիա, քաղաքային կանաչապատում դասախոս, կենս. գիտությունների թեկնածու
Օ. Դուլգարյան	«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ
Տ. Ասատրյան	Անհատ բնապահպան
Ա. Հակոբյան	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին, գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Ա. Համբարձումյան	«Հասարակական ձայն» ՀԿ, էկոլոգիական իրավունքի մասնագետ
Տ. Ասատրյան	Անհատ բնապահպան
Ա. Հակոբյան	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին, գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հարց 1. շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի փետրվարի 26-ի N 61-Լ հրամանով ստեղծված նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի հաստատում,

Հարց 2. հասարակական խորհրդի կամզում առանձին աշխատանքային խմբերի կազմերի հաստում,այս ընթացքում խմբերի կատարած աշխատանքի, վերհանված խնդիրների քննարկում,

Հարց 3. «Ընդերք» աշխատանքային խմբի ներկայացուցիչ Վիկտորիա Բուռնազյանի կողմից «Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրները՝ հիմնված «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի արդյունքների վրա» զեկույցի ներկայացում,

Հարց 4. բնապահպանական ընթացիկ խնդիրների քննարկում,

Հարց 5. խորհրդի հաջորդ նիստի օրակարգի մշակում:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը հաստատման ներկայացրեց նիստի օրակարգը:

Բացման խոսքով հանդես եկավ խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը, խնդրեց հնչեցնել հասարակական խորհրդի աշխատակարգի վերաբերյալ կարծիքներ ու առաջարկներ:

Առաջարկով հանդես եկավ Ք. Սահակյանը: Աշխատակարգի՝ աշխատանքի կազմակերպում բաժնում նշված է, որ նախարարին կից հասարակական խորհրդում կարող են ընդգրկվել 2 տարվա մասնագիտական ստաժ ունեցող քաղաքացիներ. առաջարկեց ավելացնել պահանջվող ստաժի տարիները: Ինչպես նաև անդրադարձավ աշխատակարգի 11-րդ կետին՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ նոր անդամի ընդգրկման վերաբերյալ, հետաքրքրվեց՝ արդյո՞ք նոր անդամը ձայնի իրավունք ունենալու է, թե՝ ոչ:

Պատասխանեց խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը, տեղեկացրեց, որ խորհրդի հնարավոր նոր անդամները կունենան ձայնի իրավունք, բայց և որոշակի սահմանափակումներ կլինեն:

Քննարկվեց խորհրդի անդամների ռոտացիայի հարցը:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը քվեարկության դրեց աշխատակարգի հաստատումը, հավելելով, որ այն կլինի իստիտուցոնալ այն հենքը, որով առաջ կշարժվի խորհուրդը:Ամիսներ անց աշխատակարգը կարող է փոփոխությունների ենթարկվել՝ համապատասխանեցվելով ընթացիկ պահանջներին:

Աշխատակարգը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Ռ. Պետրոսյանը ներկայացրեց խորհրդի նիստի օրակարգի երկրորդ հարցը՝ հաստատել խորհրդի կազմում առանձին աշխատանքային խմբերի կազմերը,քննարկել այս ընթացքում խմբերի կատարած աշխատանքը, վերհանված խնդիրները:

Խորհրդի կազմում կգործի 8 աշխատանքային խումբ: Քվեարկությամբ ընտրվեցին աշխատքանքային խմբերը համակարգողները՝

1. Օրենսդրական բարեփոխումների աշխատանքային խումբ
Համակարգող՝ Արայիկ Ծատուրյան

2. Էկոկրթություն և իրազեկում աշխատանքային խումբ
Համակարգող Վահե Սալահյան

3. Հողային ռեսուրսների պահպանություն
Համակարգող՝ Մարիամ Տաշչյան

4. Ջրային ռեսուրսներ
Համակարգող՝ Արևիկ Հովսեփյան

5. Մթնոլորտի պահպանություն
Համակարգող՝ Գայանե Ներսիսյան

6. Ընդերքի պահպանության ոլորտ
Համակարգող՝ Թեհմինե Ենոքյան

7. Բուսական և կենդանական աշխարհի պահպանության ոլորտ
Համակարգող՝ Արևիկ Մկրտչյան

8. Թափոններին առնչվող ոլորտ
Համակարգող՝ Օլեգ Դուլգարյան

Մ. Զաքրյանն առաջարկեց աշխատանքային խմբերի առանձին հանդիպում-քննարկումների արդյունքների վերաբերյալ հակիրճ հաշվետվություններ ներկայացնել նաև խորհրդի՝ տվյալ խմբում չընդգրկված անդամներին:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանն առաջարկեց ամեն 4-րդ նիստին աշխատանքային խմբերը համակարգողները հանդես գան հաշվետվություններով՝ կատարած աշխատանքի վերաբերյալ:

Նման կերպ աշխատանքային խմբերի առանձնացումը և դրանք համակարգողների ընտրությունը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

«Ընդերք» աշխատանքային խմբի ներկայացուցիչ Վ. Բուռնազյանը ներկայացրեց «Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրները՝ հիմնված «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի արդյունքների վրա» թեմայով զեկույց:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը զեկուցողին խնդրեց սեղմ ժամկետում իրեն էլեկտրոնային եղանակով ուղարկել զեկույցի առարկա հանդիսացող խնդրի վերաբերյալ առկա ամբողջ տեղեկատվությունը՝այն մանրամասն ուսումնասիրելու և գործին ընթացք տալու նպատակով:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը տեղեկացրեց նաև, որ այժմ Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումն ամբողջությամբ գույքագրում է այն ընկերությունների ցանկը, որոնք դրամագլխի վճարումներ են արել և իրենց հանքարդյունահանման նախագծերը կամ կասեցված են, սնակացման են տարել, կամ նախագծերն ավարտվել են:Հայտնաբերված նման ընկերությունները

դրամագլխի իրենց մասնաբաժնով ռեկուլտիվացիայի գործընթացներ են մեկնարկելու:

Նա նաև ի գիտություն խորհրդի անդամների հայտնեց, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը նոր ղեկավար ունի և առաջարկեց հարցեր նախապատրաստել ու խորհրդի հաջորդ նիստերից մեկին հրավիրել պարոն Հ. Մարտիրոսյանին՝ նպատակ ունենալով քննարկել տեսչական մարմնի վերահսկողության ոլորտային խնդիրները:

Վ. Բուռնազյանը հարց ուղղեց խորհրդի նախագահին՝ հետաքրքրվելով Ախթալայի Նահատակի պոչամբարի հետ կապված որն է պետական մարմինների դերը: նախահատի պոչամբարը պետք է 2017 թվականց սկսած ռեկուլտիվացվեր, 2020 թվականին ավարտվեր, բայց մինչև հիմա պոչամբարն աշխատում է և տնտեսվարող ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրել՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական պահանջը չկատարելու համար:

Լրացում արեց Օ. Դուլգարյանը՝ դեռևս 2019 թվականին «Հետք» լրատվականին տված հարցազրույցում ֆաբրիկայի տնօրենը նշել էր, որ Չինաստանից անօրակ գնման պատճառով պոչերի չորացման գործընթացն իրեն չի արդարացնում, ստացվում է՝ անօրակ գնման պատճառով տուժում է տարածաշրջանը:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը հավելեց, որ այժմ շրջակա միջավայրի նախարարությունում իր հրամանով ստեղծված հատուկ աշխատանքային խումբն աշխատում է ՇՄԱԳ օրենքի նոր նախագծի վրա և որ նոր օրենքով արդեն սահմանված է լինելու փորձաքննության պահանջների չկատարելու պարագայում՝ պատասխանատվության կրում: Գործող օրենքը չի սահմանում այդ պատասխանատվությունը, և տեսչական մարմինը չունի իրավական ակտ, որով առաջնորդվի նման դեպքերում:

«Միայն դա չէ, շատ ավելի մեծ ու ընդգրկուն ոլորտներ կան, որ ՇՄԱԳ փորձաքնության ենթակա են ու դրական փորձաքննություն կարող են ստանալ մի շարք վավերապայմանների առկայության դեպքում, բայց ինչ-ինչ հանգամանքներում ստանում են, և պետությունն այլևս որևէ գործիքակազմ չունի վերահսկելու, բացակայում է անգամ վերահսկող ինստիտուտը»,-նշեց Ռ. Պետրոսյանը:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանն առաջարկեց խորհրդի անդամներին, նախքան ՇՄԱԳ նոր օրենքի նախագիծը e-draft հարթակում տեղադրելը մայիսի 23-25-ն ընկած ժամանակահատվածում ներկայացնել խորհրդի անդամներին:

Հարց ուղղեց Ս. Թամոյանը, խնդրեց ներկայացնել ՇՄԱԳ նոր օրենքի նախագծի վրա աշխատող աշխատանքային խմբի կազմը:

Պատասխանեց խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը. «ՇՄԱԳ նոր օրենքի նախագծի աշխատանքային խումբը ղեկավարում է նախարարի տեղակալ Տ. Սիմոնյանը, խմբի կազմում են Շրջակա միջավայրի նախարարության մասնագիտական ստորաբաժանումների ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ և հաճախ հրավիրվում են բնապահպաներ ու շահագրգիր այլ անձինք»:

Ն. Վարդանյանը խոսեք Ամուլսարի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի հարցով նախարարությանն ուղարկած գրություններից:

Խորհրդի նախագահ Ռ. Պետրոսյանը խնդրեց վերադառնալ նիստի օրակարգային թեմաներին՝ խոստանալով տիկին Ն. Վարդանյանին, որ առանձին նիստով կքննարկվի Ամուլսարի խնդիրը:

Օ. Դուլգարյանը ցուցադրեց «Առանց հանք Լոռի» պաստառը և հանդես եկավ ելույթով՝ խոսելով Լոռու մարզում հանքարդյունաբերության խնդիրների և թափոնների անկառավարելիության մասին: Ներկայացրեց տեղեկատվություն Քարաբերդում նախօրեին իրականացված անօրինական պայթյունների մասին և հորդրեց նախարարի պաշտոնակատարին՝ հետամուտ լինել հանգամանքների բացահայտմանը:

Ամփոփելով նիստը՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց նիստերի միջանկյալ ժամանակահատվածում խմբերի կատարած աշխատանքների վերաբեյալ փոքր տեղեկանքներ պատրաստել և էլեկտրոնային տարբերակով ուղարկել խորհրդի քարտուղարին՝ նախարարին ներկայացնելու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Արձանագրեց՝ Ա. Հակոբյանը